

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, «ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ», ՀԱՅՊԵՏՏՐԱՏ,
ԵՐԵՎԱՆ, 1961, 179 էջ

Ա. Գ. Գալստյանի գրախոսվող աշխատությունը մի ուսումնասիրություն է, որը նպատակ է դրել ցույց տալ 13-րդ դարի Կիլիկյան Հայոց թագավորության ականավոր պետական գործիչ Սմբատ Սպարապետի (Գունդատաբլ) կյանքն ու գործունեությունը: Հեղինակը մեծ քանակությամբ փաստացի նյութերի հիման վրա, մատչելի շարադրությամբ, լուսաբանում է Սմբատի բազմակողմանի գործունեությունը, որպես զորավարի, դիվանագետի, գիտնականի և իրավաբանի:

Բր աշխատության սկզբում տեղավորված սեղմ ակնարկում հեղինակը տալիս է Սմբատ Սպարապետի պատմական ժամանակաշրջանի համոզիչ բնութագրեր: Նա ցույց է տալիս, թե ինչպես ստեղծվեց Կիլիկյան Հայոց թագավորությունը, ինչպիսիք էին նրա տնտեսական և կուլտուրական նվաճումները:

Բազրատունիների թագավորության անկումից հետո Կիլիկյան Հայաստանը, ինչպես նշում է Ա. Գ. Գալստյանը, դառնում է հայ մշակույթի գլխավոր կենտրոնը:

Մեծ Հայաստանից դեպի Կիլիկիա էին ձգտում հայ գիտության, մշակույթի և արվեստի լավագույն ներկայացուցիչները և շարունակում էին զարգացնել հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրան:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում հասարակության սոցիալական դրության վերլուծությանը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում զրբի այն բաժինները, որոնք նվիրված են Սմբատի պետական, զորավարական և դիվանագիտական գործունեությանը: Սմբատը ավելի քան 50 տարի եղել է Կիլիկյան Հայոց թագավորության զորքերի գլխավոր հրամանատար և իր համարյա ողջ գիտակցական կյանքը անց է կացրել պատերազմներում՝ ընդդեմ օտար նվաճողների:

Նա միաժամանակ արդյունավետ դիվանագիտական մեծ աշխատանք է վարել Արևմտաեվրոպական պետությունների ու մոնղոլների հետ, որով և կարևոր դեր է խաղացել Կիլիկյան Հայոց թագավորությունը մոնղոլական արշավանքների սպառնալիքից փրկելու գործում:

Հեղինակը բնութագրում է Սմբատի գիտական գործունեությունը, նրա գիտական գործերը, որոնք խոշոր նշանակություն ունեն ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև Արևելքի ու Արևմուտքի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Առանձնակի ուսումնասիրության է ենթարկվում Սմբատի թողած «Տարեգիրք», «Անսիզք Անտիոքայ» և առանձնապես «Դատաստանագիրք» երկերը, որոնք կարևոր ներդրում են միջնադարյան հայ իրավագիտական մտքի պատմության մեջ:

Մենք հնարավորություն չունենք ավելի հանգամանորեն կանգ առնելու այն բոլոր հարցերի վրա, որոնք արժարժված են Ա. Գ. Գալստյանի գրքում: Նպատակահարմար ենք գտնում կանգ առնել միայն գրքի վերջին «Դատաստանագիրք» գլխի վրա, առավել ևս այն պատճառով, որ Ա. Գ. Գալստյանը կազմել է Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքի»¹ գիտաքննական տեքստը և այն թարգմանել ռուսերեն:

Նախ ուշադրության արժանի է Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքի» բնութագրման հարցը: Անհրաժեշտ է նշել, որ Սմբատի «Դատաստանագիրքի» բնութագրման հարցը հայ գրականության պատմության մեջ տարբեր հեղինակներ տարբեր ձևով են գնահատել: Դրանցից ոմանք (Բաստամյան, Հովնանյան, Մորգան և ուրիշներ) պնդում են, որ «Դատաստանագիրքը» թարգմանությունն է կամ համառոտ շարադրությունը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի», հետևապես այն չունի ինքնուրույն նշանակություն: Մյուս հեղինակները (Հ. Կարստ, Ա. Ղլտճյան) ժխտում են ոչ միայն Սմբատի «Դատաստանագիրքի», այլ նաև Գոշի «Դատաստանագիրքի» արժեքը, որպես միջնադարյան հայ իրավունքի պատմության աղբյուրների: Նրանց կարծիքով այդ հուշարձանները օտար օրենքների փոխառություններ են:

Գալստյանը իրավացիորեն քննադատում է այդ տեսակետները և ցույց տալիս, որ Հ. Կարստի և Ա. Ղլտճյանի կարծիքները Սմբատի և Գոշի դատաստանագրքերի մասին մտացածին են և զուրկ որևէ հիմքից: Եվ իրոք, նշված հուշարձանների բովանդակությանը խոր ծանոթանալուց պարզվում է, որ, բացառությամբ մի քանի օրենքների և կրոնական կանոնների, որոնք փոխառված են նրանց կազմողների կողմից աստվածաշնչի տեքստերից, մնացած բոլոր օրենքներն ունեն հայկական ծագում:

Այդ դատաստանագրքերում շարադրված իրավական նորմերը եղել են հրապարակված կամ հայկական աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կողմից, կամ հանդիսացել են հայկական սովորույթի իրավական նորմերը:

Ա. Գ. Գալստյանը հերքում է նաև այն տեսակետը, համաձայն որի Սմբատի «Դատաստանագիրքը» հանդիսանում է թարգմանություն կամ համարյա շարադրությունը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի»: Իհարկե, Սմբատը ինքն է վկայում, որ «Դատաստանագիրքը» կազմելիս ձեռքի տակ ունեցել է հայ դատաստանագիրքը: Բայց վերջինս իր ժամանակակիցների, այսինքն Կիլիկիայում ապրող այն ժամանակվա հայերի համար, անհասկանալի էր: Իր զարգացման ընթացքում հայոց լեզուն Կիլիկյան Հայաստանում ենթարկվել էր փոփոխության և հեռացել գրաբար լեզվից: Այդ պատճառով,— գրում է Սմբատը իր «Դատաստանագիրքի» առաջաբանում, «բազում աշխատութեամբ փոխեցի զսաի հին եւ ի դժարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հնշտալուր եւ ի սովորական բառս... եւ զսիրտ բանիցն առեալ եղի համառատաբար» (էջ 4): Այսպիսով, այն հանգամանքը, որ Սմբատը իր ձեռքին ունեցել է հայկական դատաստանագիրք, անվիճելի է: Այդ հանգամանքը չի ժխտում նաև Ա. Գ. Գալստյանը: Հարց է ծագում, կարելի է արդյոք բերած վկայությունների հիման վրա եզրակացնել, որ Սմբատի կազմած «Դատաստանագիրքը» հանդիսանում է թարգմանություն (բառի բուն իմաստով) կամ համառոտ շարադրությունը

¹ Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրք» հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջարանը և ծանոթադրությունները Ա. Գ. Գալստյանի, Հայպետհրատ, Երևան, 1958:

Գոշի «Դատաստանագիրքի»: Նման տեսակետը, ըստ Ա. Գ. Գալստյանի, առնվազն ընդունելի է, Սմբատի «Դատաստանագիրքը» ունի ինքնուրույն նշանակություն, անգամ, եթե ընդունենք, որ Սմբատը իր ձեռքի տակ ունեցել է Գոշի «Դատաստանագիրքը»:

Սմբատի վկայությունից պարզվում է, որ նա չի թարգմանել (բառիս բուն իմաստով), այլ փոխել է (փոխեցի): Իր ձեռքի տակ եղած դատաստանագիրքը մշակել է: Կարճ ասած, Գոշի «Դատաստանագիրքը» Սմբատի համար ծառայել է որպես նրա օպտագործման աղբյուրներից մեկը և դա իհարկե, ճիշտ է:

Իրոք, եթե համեմատենք Սմբատի «Դատաստանագիրքի» բովանդակությունը Գոշի «Դատաստանագիրքի» բովանդակության հետ, ապա կարելի է նկատել, որ նրանց մեջ կան ոչ միայն նմանություններ, այլ նաև էական տարբերություններ:

Սմբատի «Դատաստանագիրքը» Գոշի գրքից տարբերվում է նաև իր կառուցվածքով: Գոշի գործը, ինչպես հայտնի է, ունի երեք բաժին՝ «Նախադրություն», «Եկեղեցական կանոնք» և «Աշխարհականք յողուածք»: Իսկ Սմբատի «Դատաստանագիրքը» նման կառուցվածք չունի:

Մյուս կողմից, Սմբատի «Դատաստանագիրքի» մեջ կան օրենքներ, որոնք բացակայում են Գոշի «Դատաստանագրքում»: Միաժամանակ Գոշի «Դատաստանագրքի» մեջ կան հոգվածներ, որոնք չեն մտել Սմբատի «Դատաստանագրքի» մեջ: Հենց այս հանգամանքը ցույց է տալիս, որ Սմբատի «Դատաստանագիրքը» կազմված է ինչպես Գոշի «Դատաստանագրքի», այնպես էլ հայ իրավունքի ուրիշ իրավագիտական աղբյուրների քննական մշակման հիման վրա:

Այնուհետև չի կարելի շնչել այն սկզբունքային տարբերությունները, որ գոյություն ունեն Գոշի և Սմբատի հայացքների միջև: Ճիշտ է, այդ երկու հեղինակներն էլ հանդիսանում են ֆեոդալական Հայաստանի տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ, բայց Սմբատը եղել է աշխարհիկ ֆեոդալների ներկայացուցիչը, իսկ Գոշը՝ հոգևորական: Գոշի և Սմբատի հայացքների տարբերությունը նախ արտահայտվում է նրանց կազմած «Դատաստանագրքերի» կառուցվածքի մեջ: Գոշը ասում է, որ մենք սկզբից շարադրել ենք եկեղեցական օրենքներ և որոշել եկեղեցական դատավորների դրությունը («Ձի առաջին է եւ մեծ» գրում է Գոշը (տե՛ս «Դատաստանագիրք», էջ 299): Իսկ Սմբատը, բնորոշված իր նպատակահարմար է գտնում իր «Դատաստանագրքում» նախ շարադրել աշխարհիկ, թագավորական օրենքներ, իսկ հետո եկեղեցական՝ «Ձի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկի» (Սմբատ, «Դատաստանագիրք», էջ 5): Սմբատի և Գոշի հայացքների տարբերությունը իր արտահայտությունը գտավ Կիլիկյան Հայոց պետականության կառուցվածքի, թագավորական իշխանության, աշխարհիկ ու եկեղեցական իշխանությունների փոխհարաբերությունների մեջ:

Այսպիսով, Սմբատի «Դատաստանագիրքը» ինքնուրույն ստեղծագործություն է և միջնադարյան հայ իրավունքի աղբյուրների մեջ գրավում է կարևոր տեղ: Այդ իրավագիտական հուշարձանը, ինչպես նշում է Ա. Գ. Գալստյանը, դրականապես տարբերվում է իրենից առաջ հայտնի հայկական բոլոր իրավագիտական հուշարձաններից:

Ա. Գ. Գալստյանը ենթադրում է, որ Սմբատի ձեռքի տակ եղել է ոչ թե այն վիթխարի դատաստանագիրքը (300 հոգվածից ավելի), որը մեզ ներկայաց-

նում է Վահան Բաստամյանը, այլ Գոշի «Դատաստանագրքի» առանձին ձեռագրերի տարբերակներից մեկը: (Տես Ա. Գ. Գալստյան, «Սմբատ Սպարապետ», էջ 176): Դա շատ հավանական է: Այդ նկատել է նաև Ադոնցը իր «Армения в эпоху Юстиниана» հայտնի աշխատության մեջ (տես էջ 191—192):

Նույն բանը կարելի է ասել Սմբատի «Դատաստանագրքի» հրատարակության առթիվ: Այն հանգամանքը, որ Սմբատի և Գոշի «Դատաստանագրքերի» տեքստերը տարբերվում են միմյանցից ոչ միայն հոդվածների քանակով, այլև հաճախ իրենց բովանդակությամբ, ցույց է տալիս առանձին հոդվածների բովանդակության տարբերությունը:

Այնուհետև, Ա. Գ. Գալստյանը իր աշխատության մեջ վերլուծում է Սմբատի «Դատաստանագրքի» նշանակությունը Կիլիկյան Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմության ուսումնասիրության տեսակետից: Նա շարադրում է Հայաստանի ֆեոդալական իրավունքի հիմնական ինստիտուտները՝ ըստ Սմբատի «Դատաստանագրքի»՝ տալով թագավորի ու նրա վասալների փոխհարաբերությունների, հասարակական դասերի դրություն, մասնավորապես ճորտ գյուղացիների և այլոց մասին անհրաժեշտ վերլուծություններ: Հեղինակը իրավացի է, երբ գտնում է, թե Սմբատը իր «Դատաստանագրքում» ձգտում է բարձրացնել թագավորի հեղինակությունը, նպատակ ունենալով ուժեղացնել երկրում թագավորական իշխանությունը, որը պետք է կարևոր դեր խաղա կենտրոնական միապետական կարգերի ստեղծման գործում:

Մի քանի խոսք Սմբատի «Դատաստանագրքի» ոռոսերեն թարգմանության առթիվ: Անվիճելի է, որ իրավունքի այնպիսի բարդ աղբյուրի թարգմանությունը, ինչպիսին Սմբատի «Դատաստանագրքն» է, մեծ դժվարություն է ներկայացնում: Դժվարությունը նախ նրանում է, որ Սմբատի լեզուն տարբերվում է ինչպես գրաբարից, այնպես էլ նոր հայերեն լեզվից:

Սմբատի «Դատաստանագրքը» իր մեջ բովանդակում է բազմաթիվ մասնագիտական բառեր, որոնք հեղինակը փոխառել է ինչպես ժողովրդական խոսակցական լեզվից, այնպես էլ հունարենից, լատիներենից, հին ֆրանսերենից և այլ լեզուներից: Ընդամին չի կարելի մոռանալ, որ Սմբատի «Դատաստանագրքը» մեր սովետական գրականության մեջ չի ենթարկվել լուրջ գիտական ուսումնասիրության, և անգամ չի թարգմանվել աշխարհաբար:

Չնայած այս դժվարություններին, Ա. Գ. Գալստյանը կարողացել է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքը» հաջողությամբ թարգմանել:

Տվյալ թարգմանությունը, որպես առաջին փորձ, ունի մի շարք թերություններ: Ինչպես վերը նշվեց, «Դատաստանագրքի» առաջաբանում Սմբատը ցույց է տալիս, որ այդ գործի նախապատրաստման ժամանակ ձեռքի տակ ունեցել է հայոց դատաստանագիրք, որից նա նյութեր է քաղել: Այդ մասին նա գրում է. «Ես Սմբատս... բազում աշխատանալք աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերացեալ մտալք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չէին ի հասկնալ, եւ ոչ յօկտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժարաբառ եւ յանհասկնալի դրոյ ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս» («Դատաստանագիրք», էջ 4): Սմբատի «Դատաստանագրքի» այս կտորը Ա. Գ. Գալստյանը թարգմանում է այսպես՝ «Я, Смбат... вложил много труда в сей судебник, ибо он был настолько искажен и его древнеармянский язык настолько отошел от нынешнего, что стал совершенно непонятен и негоден для пользования. И я ... пре-

много трудился над тем, чтобы переложить эту книгу со старого, недоступного и непонятного языка на наш сладкозвучный и общепринятый язык» («Судебник», стр. 4).

Այս թարգմանությունը հաջող չէ: Այն արտահայտությունները, թե «он был искажен», «переложить» և այլն, աղավաղված են և չեն արտահայտում Սմբատի միտքը:

Իրականում Սմբատը գրում է. «Много трудился над судебником, ибо современный язык (Киликийской Армении) так видоизменился и отошел от древнеармянского языка, что судебник стал совершенно непонятен и негоден для пользования. По этому я (Смбат)... с большим трудом перевел (... переделал) его со старого, тяжелого и непонятного языка на наш легкий и привычный язык».

«Նա աղավաղված էր» արտահայտությունը ոչ մի կերպ չի համապատասխանում հայերեն «այլակերպված էր» արտահայտությանը, որը, անկասկած, նշանակում է «ձևափոխվել էր» կամ ուղղակի «փոխվել էր»: Եվ դա վերաբերվում է ոչ թե դատաստանագրքին, այլ Կիլիկյան Հայաստանի լեզվին: Ինչ վերաբերվում է «փոխեցի» արտահայտությանը, ապա դա նույնպես ճիշտ չէ թարգմանված: Այդ խոսքը նշանակում է переделал, բայց ոչ թե «переложить», որովհետև նա չի համապատասխանում այդ հուշարձանին: Չէ որ «переложить» խոսքը ցույց է տալիս Սմբատի աշխատության տեխնիկական, ոչ ստեղծագործական բնույթը, իսկ դա, ինչպես մենք տեսանք, չի համապատասխանում իրականությանը: Սմբատի «Դատաստանագիրքը» հանդիսանում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և այլ հայ իրավագիտական աղբյուրների ստեղծագործական մշակման արդյունքը: Այդ պատճառով «переложить» խոսքը տվյալ դեպքում անհամապատասխան է:

Սմբատի «Դատաստանագրքի» տեքստում ասված է. «Եւ առանց դատաստանի եւ երեսոյ թող իրավունք չլինի», այսինքն «Без суда и очной ставки пусть не решат тяжбы» կամ «И пусть не решат тяжбы пока стороны не станут лицом к лицу». Ուրիշ խոսքով, հոգվածը ցույց է տալիս դատավարության վիճարկելի բնույթը: Ա. Գ. Գալստյանը այդ նախադասությունը թարգմանում է այսպես. «и никто не имеет права без суда и свидетелей решать (эти вопросы)»:

Նման թարգմանություն, իհարկե, ճիշտ չէ, քանի որ «Երեսոյ» խոսքը ճիշտ թարգմանությամբ նշանակում է «лицом к лицу», «դեմ առ դեմ կանգնեցնել» և ոչ թե դարձնել «վկաներ»:

Ճիշտ չեն թարգմանված և մի քանի ուրիշ խոսքեր և արտահայտություններ: Այսպես, «Այլազգի» խոսքը, այսինքն иноверный, «не христианин» թարգմանված է «чужеземец» խոսքով, որը ճիշտ չէ:

Ա. Գալստյանը, պիտի ենթադրել, ուղադրություն չի դարձրել այն բանին, որ ըստ ֆեոդալական իրավունքի, հանցագործության չափը որոշելու ժամանակ մոտենում էին հանցագործին ըստ նրա դասակարգային ու կրոնական պատկանելության: Նույն հանցագործության համար այլազգիները ենթարկվում էին ավելի դաժան պատիժների, քան քրիստոնյաները: Ըստ Սմբատի «Դատաստանագրքի» (գլուխ Ա, էջ 10) քրիստոնյաներին սպանելու համար նախատեսվում էր 300 դահեկան, որպես արյան գին, իսկ այլազգիների (տաճիկի, թուրքի) սպանության դեպքում՝ 3-րդ մասը, այսինքն 100 դահեկան:

Այնուհետև, «վասն տիաթկերոյ հաստատուն լինելոյ» (էջ 129), որ նշանակում է կտակի իսկությունը, «թարգմանված է «о законность завещания», «վասն որ անոթ առնու վարձով», այսինքն «իրի վարձով տալու մասին», թարգմանված է «Об аренде сосуда» (էջ 159)։

Մեր ցույց տված թերությունները, իհարկե, չեն կարող փոխել մեր ընդհանուր դրական կարծիքը Ա. Մ. Դալստյանի աշխատության նկատմամբ, որը հանդիսանում է արժեքավոր ներդրում ՍՍՌՄ ժողովուրդների պետության և իրավունքի պատմության մեջ։ Եւ մեծ օգնություն է Հայաստանի պատմաբաններին և իրավագետներին, պետության և իրավունքի պատմության ուսումնասիրության գործում։

Ա. Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ